

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

24 մարտի 2005 թվականի N 375-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ  
ԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՆՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ  
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ, 17-րդ հոդվածի 2-րդ մասերին և 43-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ բաժնի 8-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*

1. Հաստատել՝

ա) Հայաստանի Հանրապետություն ռադիոակտիվ թափոնների ներմուծման կամ Հայաստանի Հանրապետությունից դրանց արտահանման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) Հայաստանի Հանրապետություն ռադիոակտիվ թափոնների ներմուծման կամ Հայաստանի Հանրապետությունից դրանց արտահանման լիցենզիաների ձևերը՝ համաձայն NN 2 և 3 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Ա. Մարգարյան**

2005 թ. մարտի 31  
Երևան

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2005 թվականի  
մարտի 24-ի N 375-Ն որոշման

**Կ Ա Ր Գ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ  
ԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՆՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ  
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետություն ռադիոակտիվ

թափոնների ներմուծման կամ Հայաստանի Հանրապետությունից դրանց արտահանման լիցենզավորմանը ներկայացվող պահանջները:

2. Սույն կարգի նպատակը Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ռադիոակտիվ թափոնների չթույլատրված տեղաշարժը կանխելը և իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից մարդկանց պաշտպանվածությունն ապահովելն է:

3. Ռադիոակտիվ թափոնների ներմուծման կամ արտահանման լիցենզիան տրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

**(3-րդ կետը փոփ. 07.07.16 N 698-Ն)**

4. Սույն կարգը մշակված է «Լիցենզավորման մասին» և «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին համապատասխան:

5. Հայաստանի Հանրապետություն ռադիոակտիվ թափոնները ներմուծվում կամ Հայաստանի Հանրապետությունից դրանք արտահանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

## **II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

6. Ռադիոակտիվ թափոններ ներմուծող կամ արտահանող անձը լիցենզիա ստանալու նպատակով լիցենզավորման համար լիազորված մարմին է ներկայացնում հայտ՝ համաձայն NN 1 և 2 ձևերի, որում նշվում են՝

ա) իրավաբանական անձի համար՝ իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման համարը, հարկ վճարողի հաշվառման համարի վերաբերյալ տեղեկատվություն, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, ներմուծվող կամ արտահանվող ռադիոակտիվ թափոնների տեսակը և քանակությունը, այն պետությունը, որտեղից պետք է ներմուծվեն կամ որտեղ պետք է արտահանվեն ռադիոակտիվ թափոնները, ստացման կամ առաքման նախատեսվող ժամանակը:

բ) անհատ ձեռնարկատիրոջ համար՝ անունը, հայրանունը, ազգանունը, պետական հաշվառման համարը, հարկ վճարողի հաշվառման համարի վերաբերյալ տեղեկատվություն, բնակության և գործունեության իրականացման վայրերը, ներմուծվող կամ արտահանվող ռադիոակտիվ թափոնների տեսակը և քանակությունը, այն պետությունը, որտեղից պետք է ներմուծվեն կամ որտեղ պետք է արտահանվեն ռադիոակտիվ թափոնները, ստացման կամ առաքման նախատեսվող ժամանակը:

**(6-րդ կետը լրաց 16.11.06 N 1664-Ն, 27.12.12 N 1677-Ն, փոփ. 07.07.16 N 698-Ն)**

6.1. Լիցենզիա տալու համար գանձվում է պետական տուրք «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով: Ընդ որում՝

1) լիցենզավորման մարմինը լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու մասին

որոշման ընդունումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով դրա մասին տեղեկացնում է հայտատուին: Տեղեկացմամբ հայտատուն պետք է նախագգուշացվի սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված հետևանքների մասին.

2) հայտատուն սույն կետի 1-ին ենթակետով սահմանված համապատասխան գործողության համար օրենքով սահմանված պետական տուրքը պարտավոր է վճարել ոչ ուշ, քան լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու հայտը բավարարելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում.

3) հայտատուն լիցենզավորող մարմին պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ կարող է չներկայացնել: Հայտատուի կողմից պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ չներկայացվելու դեպքում լիցենզավորող մարմինը լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու հայտը բավարարելու մասին որոշումն ընդունելուց հետո գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով հավաստիանում է պետական տուրքի վճարման մասին և հայտատուին պատշաճ ձևով հանձնում կամ ուղարկում է լիցենզիան, լիցենզիայի կրկնօրինակը, ժամկետը երկարաձգված լիցենզիան, վերաձևակերպված լիցենզիան, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու լիցենզիան, ինչպես նաև դրանց մասին համապատասխան որոշումները.

4) սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետում հայտատուի կողմից պետական տուրքը չվճարվելու դեպքում համապատասխան հայտը մերժվում է՝ պետական տուրքը չվճարելու հիմքով: Հայտը մերժելուց հետո լիցենզավորող մարմնի որոշումը չեղյալ է ճանաչվում:

**(6.1-ին կետը լրաց. 06.03.14 N 242-Ն)**

7. Հայտին կից՝ պետք է ներկայացվեն՝

ա) **(ենթակետն ուժը կորցրել է 28.04.11 N 636-Ն)**

բ) եթե ռադիոակտիվ թափոնների ներմուծումը կամ արտահանումն իրականացվում է միջազգային կամ օտարերկրյա կազմակերպության հետ համագործակցության ծրագրի շրջանակներում, ապա պետք է ներկայացվի այդ ծրագրի պատճենը.

գ) լիցենզիա ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը՝ նախօրոք վճարված լինելու դեպքում (ներկայացվում է հայտատուի ցանկությամբ).

դ) ռադիոակտիվ թափոնների պահման լիցենզիայի պատճենը.

ե) վերամշակման տեխնոլոգիական գործընթացով նախատեսված չափին ներմուծվող ռադիոակտիվ թափոնների քանակի ու ընդհանուր ակտիվության համապատասխանության մասին փորձաքննական եզրակացությունը.

զ) ներմուծվող ռադիոակտիվ թափոնների պահման համար նախատեսված

պահեստարանում կամ գերեզմանոցում տվյալ թափոնների պահման հնարավորության մասին ատոմային էներգիայի օգտագործման բնագավառը կարգավորող մարմնի եզրակացությունը.

է) ռադիոակտիվ թափոնների ներմուծում կամ արտահանում իրականացնող անձնակազմի որակավորումը հաստատող փաստաթղթերի պատճենները:

**(7-րդ կետը փոփ. 28.04.11 N 636-Ն, լրաց. 06.03.14 N 242-Ն)**

8. Ռադիոակտիվ թափոնների արտահանման լիցենզիա ստանալու մասին հայտին կից պետք է ներկայացվեն նաև՝

ա) արտահանվող թափոնների ներմուծման դեպքում՝ ստացող կողմի՝ իր պետության օրենսդրությամբ սահմանված թույլտվության պատճենը.

բ) արտահանվող թափոնների փաթեթավորման համապատասխանության մասին փորձաքննական եզրակացությունը:

8.1. Լիցենզիա ստանալու մասին հայտում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակների, ոչ իրավաբանական անճշտությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերի թերի լինելու դեպքում լիցենզավորող մարմինը դրանք հայտնաբերելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում առաջարկում է հայտատուին 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները:

**(8.1-ին կետը լրաց. 06.03.14 N 242-Ն)**

9. Ռադիոակտիվ թափոնների ներմուծման լիցենզիա ստանալու մասին հայտը և դրան կից փաստաթղթերը լիցենզավորման համար լիազորված մարմին պետք է ներկայացվեն մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք դրանք ներմուծելը, բայց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ:

10. Ռադիոակտիվ թափոնների ներմուծման կամ արտահանման լիցենզիան տրվում է սույն կարգով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 23 աշխատանքային օրվա ընթացքում:

**(10-րդ կետը խմբ. 06.03.14 N 242-Ն)**

11. Եթե ռադիոակտիվ թափոնների ներմուծման կամ արտահանման լիցենզիա ստանալու համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված հայտը և դրան կից փաստաթղթերը համապատասխանում են սույն կարգի պահանջներին, ապա Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ տրվում է լիցենզիա՝ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

12. Ռադիոակտիվ թափոնների ներմուծման կամ արտահանման լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում:

13. Ռադիոակտիվ թափոնների ներմուծման կամ արտահանման լիցենզիան տրվում է մինչև դրանց ներմուծման կամ արտահանման գործընթացի ավարտը, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով:

**Հայաստանի Հանրապետության**

**Մ. Թովուզյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Յ Տ \_ \_ \_ \_

ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայտատու \_\_\_\_\_
2. Հայտատուի գտնվելու վայրը \_\_\_\_\_
3. Ներմուծվող ռադիոակտիվ թափոնները`
  - ա) տեսակը \_\_\_\_\_
  - բ) քանակությունը \_\_\_\_\_
4. Որ պետությունից է ներմուծվում \_\_\_\_\_
5. Առաքողը \_\_\_\_\_
6. Գործունեության իրականացման վայրը \_\_\_\_\_
7. Ներմուծման նախատեսվող ժամանակը \_\_\_\_\_

8. հայտին կից ներկայացվում են`

ա) լիցենզիա ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը` նախօրոք վճարված լինելու դեպքում (ներկայացվում է հայտատուի ցանկությամբ)

բ) ռադիոակտիվ թափոնների պահման լիցենզիայի պատճենը

- գ)
- դ)
- ե)

\_\_\_\_\_ (հայտը ներկայացնողի պաշտոնը)

\_\_\_\_\_ (ստորագրությունը, անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ 200 թ.

*(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն, լրաց. 06.03.14 N 242-Ն)*

**Ձև N 2**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Հ Ա Յ Տ \_ \_ \_ \_**

**ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. Հայտատու \_\_\_\_\_
2. Հայտատուի գտնվելու վայրը \_\_\_\_\_
3. Արտահանվող ռադիոակտիվ թափոնները՝
  - ա) տեսակը \_\_\_\_\_
  - բ) քանակությունը \_\_\_\_\_
4. Որ պետությունից են արտահանվում \_\_\_\_\_
5. Ստացողը \_\_\_\_\_
6. Արտահանման նախատեսվող ժամանակը \_\_\_\_\_
7. Հայտին կից ներկայացվում են՝
  - ա) լիցենզիա ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը՝ նախօրոք վճարված լինելու դեպքում (ներկայացվում է հայտատուի ցանկությամբ)
  - բ) ստացողի ներմուծման թույլտվության պատճենը
  - գ) \_\_\_\_\_
  - դ) \_\_\_\_\_
  - ե) \_\_\_\_\_

\_\_\_\_\_ (հայտը ներկայացնողի պաշտոնը)

\_\_\_\_\_ (ստորագրությունը, անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ 200 թ.

*(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն, լրաց. 06.03.14 N 242-Ն)*

*(հավելվածը լրաց. 16.11.06 N 1664-Ն, փոփ. 17.02.11 N 140-Ն, 28.04.11 N 636-Ն, լրաց. 27.12.12 N 1677-Ն, լրաց, խմբ. 06.03.14 N 242-Ն, փոփ. 07.07.16 N 698-Ն)*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Լ Ի Ց Ե Ն Ձ Ի Ա N \_ \_ \_ \_**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ**

Տրված՝ \_\_\_\_\_ 200 թ.

Իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը \_\_\_\_\_

Անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը \_\_\_\_\_

Գործունեության իրականացման վայրը \_\_\_\_\_

Լիցենզիան տրվում է մինչև \_\_\_\_\_ 200 թ.

\_\_\_\_\_  
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

*(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն)*

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Մ. Թովուզյան**  
Հավելված N 3  
ՀՀ կառավարության 2005 թվականի  
մարտի 24-ի N 375-Ն որոշման



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Լ Ի Ց Ե Ն Ձ Ի Ա N \_ \_ \_ \_**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ**

Տրված՝ \_\_\_\_\_ 200 թ.

Իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը \_\_\_\_\_

\_\_\_\_\_

Անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը

\_\_\_\_\_

Գործունեության իրականացման վայրը \_\_\_\_\_

\_\_\_\_\_

Լիցենզիան տրվում է մինչև \_\_\_\_\_ 200 թ.

\_\_\_\_\_  
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ.Տ.

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Մ. Թովուզյան**